Գեղարքունիքի մարզպետարան, մարզպետ Կարեն Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն.Սարգսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել՝

1. Այս պահի դրությամբ Գեղարքունիքի մարզում քա՞նի դպրոց է դասապրոցեսն իրականացնում առկա եղանակով, քա՞նի դպրոց՝ հեռավար (հնարավորության դեպքում նշել համայնքներն ու քաղաքները),

2. Այն դպրոցներում, որտեղ դասապրոցեսը հեռավար է իրականացվում, արդյո՞ք բոլոր աշակերտներն ու ուսուցիչներն են ապահովված համապատասխան տեխնիկայով և ունե՞ն արդյոք ինտերնետի հասանելիություն,

3. Հընթացս վերահսկվու՞մ է դասապրոցեսը՝ գնահատելու առկա խնդիրներն ու անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու,

4. Հատկապես ի՞նչ խնդիրներ կան ու լուծման ի՞նչ եղանակներ են առաջարկվել,

5. Հեռավարից առկա դասապրոցեսի անցնելու մոտավոր ժամկետներ կարո՞ղ եք նշել։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ)։ Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում։

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին(հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը։

Կանխավ շնորհակալ եմ։

Ժուռնալիստ.ամ-ի թղթակից Քնարիկ Վարդանյան

01.10.2022